Եւ կայսրն Թագաւորեցոյց զորդին իւր, և ինքն եղև կրօնաւոր:

Լուտովիկոս՝ որդի Լօտօրիոսի՝ սկսաւ յամի Տեառն ՊԿ. ինքնակալեալ ամս ԻՆ: Սա նախ՝ աբեղայ եղև, և յետոյ որպէս զՅուլիանոս կարգաթող եղև և դիւահարեցաւ: Յաւուրս սորա Իտալացւոց Գ. օր Գ. գիշեր արիւն անձրևեաց:

Գառլոս՝ որ է Կալվոս Ճաղատ՝ սկսաւ յամի Տեառն ՊԾԵ. ինքնակալեալ ամս Գ. և ամիս Թ: Սա նեղեաց զՊապն՝ մինչև կայսերացոյց զնա: Սա կամեցաւ զբերդն Գօմպոլտիոյ 'ի գաւառին Գալլիոյ՝ շինել քաղաք՝ որպէս զԿոստանդիա Բիւզանդիա. բայց ոչ եհաս: Սա դեղակուր եղև յումեմնէ Ջհտէ Սեդեկայ անուն. որ և մեռաւ: Յաւուրս սորա առաւ Սկիլեայ 'ի Տաճկաց:

Գառլոս երրորդ սկսաւ յամի Տեառն ՊՁԳ. ինքնակալեալ ամս ԺԲ: Սա 'ի

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան